

Գաւիթ արտաւ ճնճղտիւր յըմեն լցուան մանչ կուրկը արտը, զինքն էլ զինաց, մտաւ կուրկը արաը մէջ:

87. Պառաւ ըլաւ գինաց տտաւ, ուր Գաւիթ ընկի կուրկը արաը մէջ. էտաց.— Գաւիթ, կըրե՛՛ղ քի տանը. վրէ՛՛ գիւ ընկիւրըս իմ կուրկը արաը մէջ.

էտաց.— Պառա՛ւ, ճնճիւղ կոպանիմ.

էտաց.— Ա՛խ կըրե՛՛ղ քի տանը. կրեօղ քի տանը:

էտաց.— Պառա՛ւ, վրէ՛՛ կըրեօղ տանը, իս ինչ իմ էրի:

88. Էտաց.— Էդա տասնըխինգ տարը կայ, էդա Սիւլ սարը բիւլիւր պատան<sup>1</sup> ի քեաշիւր, էնքամ ճանալար, վերու ուխչարնիւր, ուր վերուց զինք կը թալի էն պատնը մէջ, էլ չի կէրի գիւս ըր՛ը: Գաւիթ, կգետս, ճնճիւղ կոպանըս, ճնճիւղ մէջ ինչքան միս կոյ, գինա Սիւլ սարը մէկ—տաս խսա վերու ուխչար բի, էրա կալրմա, հա՛ կի, հա՛ կի. իսկի չի խըսի<sup>2</sup>:

— Պառա՛ւ, կըսը Գաւիթ, Սիւլ սարը ս՛ր տեղն է:

— Գինա՛, Յեօլանըն էտս, կը տանը քի. նշանց կտայ:

89. Գաւիթ կգետայ տուն, կըսը.— Խըեօխպէ՛ր, լիւսիւն խիտ քի տէրթանը Սիւլ սարը, վերու ուխչար ար բերինք, ճնճիւղ ինչ է, մէկ վրթիւճ է. էդա ճնճիւղքեօլ մինք ինչ ար կշտանանք. իմ խէր էդա սարը էտքամ վերու ուխչար պանա ի էրիւր. զըր բըննատուն<sup>3</sup>. էրթանք, բերընք, մի խամա էնինք կալրմա:

90. Յեօլան էն տե տուշունմիշ կընը, կերթայ քեաղքը մարգիբիւն մօտ, կըսը.— Իս չըմ գտի, Գաւիթն սրն ի շանց տուը, յէս օր Գաւիթ յիմ վերայ զուռիւր է, կըսը.— «Տէրթանը սար, իմ խէր վերու ուխչար պանա ի էրիւր. տէրթանք, բերընք»:

91 Էդա քեաղքը յըմեն մարգ կըսը.— Յեօլան, ուր գիւ էրթան, մինք էլ ար գեանք, էն տե թամաշա էնինք. էն տե մկայ ջիւջ—ջիւջ առջիւր կան, գէլիւր կան մէջ, շատ վերու ուխչար էլ կայ մէջ, տանանք, Գաւիթ ինչը կոպանի էդա վերու ուխչարքիւր:

92. Խըլիւսիւն յըմեն ժողովան, գինացըն Սիւլ սար. տասն սարը մէջ շատուր ճանալար կայ. լտուած ի պատանը մէջ:

Գաւիթ ըրշկաց—ըրշկաց, էտաց.— Մօտ մի՛ք գետայ. իս չըմ թուլնը գիւք գանիք, էդա իմ խօը բունաուրքիւրն ին, իմ խէր բունիւր է, իս գիւս բանամ, յըմեն խանիմ գիւս, նո՛ւր գինացէք, ս՛ր կարըճ է, յիւրըշ տեղ սպանէ:

93. Գաւիթ զպատը մէկ տեղ կը քեանգի, ճանալարքիւր յըմեն գիւս կը խանը, կըսը.— Դէ, գինացէք, ս՛ր կարըճ է յիւր խամա սպանի:

1 Պարիսպ: 2 Վերջանալ, սրծնիւ: 3 Բանտ: